



ԼՈՒՍԻՆԵ ԳԱԶԱՅԻ ՂԱՐԱԽԱՆՅԱՆ,

*հ.գ.թ., դոցենտ*

*Հոդվածը ներկայացվել է 10.04.2021,*

*գրախոսվել է 10.04.2021,*

*ընդունվել է փրկագրության 20.04.2021*

## **ԹՈՒՐՔԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԱՐՏԱՀԱՅՏՎԱԾ ԲԱՅԱՍԱԿԱՆ ՍՏԵՐԵՈՏԻՊԵՐԸ ՕՍԻՊ ՄԱՆԴԵԼՇՏԱՄԻ «ԿԱՌԱՊԱՆԸ» ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԵՎ ՆԱԴԵԺԴԱ ՄԱՆԴԵԼՇՏԱՄԻ ՀՈՒՇԵՐՈՒՄ**

Գեղարվեստական գրականության մեջ ամփոփված են ինչպես ավտո, այնպես էլ հետերոստերեոտիպերը, որոնցից հնարավոր է դառնում կռահել ոչ միայն տվյալ էթնոսի բնավորության ու խառնվածքի, այլև այլ էթնոսների ու ժողովուրդների մասին պատկերացումները: Հոգեբանության մեջ կա կոնտենտ վերլուծության մեթոդ, որով մենք քանակական և որակական ցուցիչների համադրման արդյունքում ստանում ենք, օրինակ դրդապատճառների, մղումների, նախահարձակ լինելու և մեր խնդրո առարկայի մասին համապատասխան պատկեր: Այս առումով հետաքրքիր վերլուծության նյութ են պարունակում գեղարվեստական գրականության այն նյութերը, որոնցում արտահայտված են բացասական ստերեոտիպեր:

Ժամանակակից հոգեբանական գրականության մեջ «ստերեոտիպ» հասկացությունն ունի տարաբնույթ սահմանումներ, որոնց ընդհանրացված ձևակերպումն ունի հետևյալ նկարագիրը. ստերեոտիպը, այդ թվում և էթնիկական ստերեոտիպը, մարդկանց ու խմբերի մասին ընդհանրացված ու կայուն. պատկերացումներն են, որոնք իրենց մեջ ամփոփում են ստանդարտացված **խմբային փորձը՝ ավելի հաճախ աղճատելով իրականությունը:** «Ստերեոտիպը» դիտվում է որպես մարդկանց ու երևույթների վերաբերյալ կանխակալ կարծիք, որը հետևանք է կոնկրետ երևույթի ոչ թե անմիջական գնահատականի՝ հիմնված թարմ տպավորությունների և վերլուծությունների վրա, այլ ստացված է ստանդարտացված դատողություններից ու սպասելիքներից, իսկ «էթնիկական ստերեոտիպերը որոշակի պատկերացումներ ու դիրքորոշումներ են, համոզմունքներ սեփական կամ այլ էթնոսի մասին: Դրանց մեջ ևս կան և՛ զգացմունքներ, և՛ վարքի ծրագրեր, որոնք գործի են դրվում էթնոսների ներկայացուցիչների հանդիպումների ընթացքում» [1, 209]: Համաշխարհային ու հայ գրականության մեջ բավականին մեծ թիվ են կազմում թուրքերի, թուրքական էթնոսի նկատմամբ արտահայտված ստերեոտիպերը: Թուրքերի, մասնավորապես ադրբեջանցի

թուրքերի հանդեպ որպես ստերեոտիպերի արտահայտման օրինակ հողվածի շրջանակներում ներկայացված է միայն Օսպիպ Մանդելշտամի «Կառապանը» ստեղծագործությունը, որը, ըստ էության, հրկիզված Շուշից (1920 թվական) ստացած տպավորությունների արտացոլումն է: Խոհականությամբ ու աներևակայելի զսպվածությամբ է արտահայտված Օ. Մանդելշտամի ժամանակի և իրականության զգացողությունը:

Հրկիզված Շուշին նրա պոեզիայում դառնում է քաղաքական թեմա, որտեղ արտահայտված են թուրքերի նկատմամբ բացասական հետերոկարծրատիպեր: Գեղագիտական ու հոգեբանական, հուզական ու զգացմունքային ճշգրիտ մեկնություններով է ներկայացվում բարբարոսների հրկիզած Շուշին, որը ժամանակի իրողությունները համապարփակ պատկերով փոխանցում է ընթերցողին.

*«Քառասուն հազար մեռած պարուհան  
Պարվում էր չորս բոլորը,  
Եվ աշխարհանքի անհոգ բոժոժը  
Թաղված էր բարձունքում:  
Եվ անամոթ շիկնում են  
Մերկ տները հրկիզված,  
Նրանց վրա մուգ երկինքը  
Միգամած էր հանց ժանդարմը» [3, 184]:*

Էթնիկական ստերեոտիպերը ենթագիտակցական են,- գրում է Ալբերտ Նալչաջյանը,- բայց նույնիսկ այդպիսին լինելով դրանք՝ իրենց կրողի համար աննկատելիորեն, ազդում են նրա իմացական գործընթացների վրա: Այդ ազդեցության նշաններից մեկը մարդու միջէթնիկական ընկալումների ընտրականությունն է. հեշտությամբ է ընկալվում այն ինֆորմացիան, որը համապատասխանում է ստերեոտիպին, հաստատում և ուժեղացնում է այն [3, 215]:

Չնայած ամուսինները Շուշիի 1920 թվականի կոտորածից տաս տարի անց են գտնվում քաղաքում, այնուհանդերձ «մերկ տները», «մեռած պատուհաններն» ու «ժանտախտի նման միգամած երկինքը» մատնում են կատարված սարսափելի իրադարձությունների մասին, և Շուշին դառնում է «գիշատչային» [6, 517]: Հրկիզված Շուշին մանդելշտամների ընկալումներում հաստատվում ու ամրապնդվում է՝ ձևավորելով բացասական հետերոստերեոտիպեր թուրքերի, դրական ավտոստերեոտիպեր հայերի նկատմամբ:

«Կառապանը» բանաստեղծության մեջ ձիակառքը քշողը թուրք է, որը գրողի և նրա կնոջ մոտ առաջացրել էր վախի և զգուշավորության զգացում. «Մենք չէինք հավատում, որ նա մեզ, իրոք, կհասցնի Ստեփանակերտ», - գրված է նրա հուշերում: Վախը որպես բազային հույզ և զգուշավորությունը արտահայտված են բոլոր բառերի ենթատեքստերում:

*Нам попался фаэтончик,  
Пропеченный как изюм,  
Словно дьявола погонщик,  
Односложен и угрюм.  
Մեզ բախար ընկավ մի կառապան  
Չորացած էր չամիչի պես,  
Նա դևերի կառապանն էր,*

*Քչախոս էր ու մոայլ [6, 518]:*

Ստերեոտիպն այստեղ արտահայտված է «ղևերի» բառի մեջ, որը բանաստեղծի իմացական, հուզական ու զգացմունքային բլոկն է: Այդ բանաստեղծությունը ամբողջապես էթնիկական բացասական հետերոստերեոտիպի դրսևորում է: Նույն բացասական ընկալումներ են արտահայտված նաև հետևյալ քառատողում.

*Բարձր լեռնանցքում,  
Թուրքական կողմում,  
Մահվան հետ խնջույք-  
Ասես՝ երազում [6, 518]:*

«Մահվան հետ խնջույք» պատկերավոր արտահայտության մեջ ևս ամբողջանում է թուրքին վերագրվող վարքային մոդելը: Եվ մահ սփռելն ու ավերածությունները դառնում են թուրքական /ադրբեջանական/ էթնիկական հանրույթի ինքնության, մշակույթի և առհասարակ ինքնահաստատման մեխանիզմներ:

Բացասական ստերեոտիպը հենց ինքը «սոսկանք դիմագծով» կառապանն է, որին Մանդելշտամը ընկալում է որպես վախի ու վտանգի օբյեկտ՝ բնութագրելով որպես «ժանտախտի նախագահ»:

Հրկիզված Շուշին տեսնելու պահից ամբողջանում են Օսիպ և Նադեժդա Մանդելշտամների դիրքորոշումները թուրքերի նկատմամբ: Նադեժդա Մանդելշտամի՝ Օսիպ Մանդելշտամի կնոջ վերհուշ արձակում ևս բավականին շատ են բացասական ստերեոտիպերը: Այսպես. «Օսիպ Մանդելշտամի տպավորությունն այն էր, որ շուկայի մուսուլմանները այն մարդասպանների մնացուկներն են, որոնք տասը տարի առաջ ավերել են քաղաքը, միայն թե դա նրանց օգուտ չտվեց. ամենուր նույն արևելյան աղքատությունը, հրեշավոր ցնցոտիները, դեմքերին թարախոտ պալարներ: Բռերով վաճառում էին եզիպտացորենի ալյուր, նաև եզիպտացորենի կողր, բլիթներ: Մենք չհամարձակվեցինք այդ ձեռքերից գնել բլիթներ, չնայած քաղցած էինք: Շուկայի մարդիկ մեզ առաջարկեցին գիշերել իրենց մոտ, բայց ես վախենում էի արևելյան թարախոտ պալարներից, իսկ Մանդելշտամը համակված էր այն մտքով, որ մեր առջև ցեղասպաններ են: Կառապանը (թուրք) նրա համար ասոցացվում է հանցագործ կերպարի հետ, և մեռած քաղաքի բովանդակ պատկերը նա ամենախիտ գույներով, հույզերի ու մտքերի գեներացիայով տեսնում է կառապանի մեջ:

*Եվ Լեռնային Ղարաբաղում  
Գիշարչային Շուշիում,  
Վերապրեցի ես սարսափներ,  
Որ ներհակ են մեր հոգուն [6, 183]:*

Բանաստեղծի գրավոր խոսքի ինչպես տեքստում, այնպես էլ ենթատեքստում սարսափի, խորքային ընկճվածության, հիասթափության ու էկզիստենցիալ վակուումի դրսևորումներ են: Եվ բնավ պատահական չէ, որ հրկիզված Շուշիի տպավորությունները ամբողջանում են «դժբախտ», ապա «մահվան քաղաք» արտահայտությունների մեջ:

Որոշեցինք մտնել Ստեփանակերտ՝ մարզային քաղաք,- գրում է Ն. Մանդելշտամը: Եվ Մանդելշտամը Ստեփանակերտ մտնելու ճանապարհին տեսնում է արոտավայրից վերադարձող նախիրը և նրա մոտ առաջանում է ազատագրված լինելու զգացողություն: Սա

հոգեբանական «պրիզմայի էֆեկտն է», որը ստացել է հետևյալ վերբալ դրսևորումը. «**Մենք այնպիսի զգացողություն ունենք, որ փրկվել ենք**», - գրում է նա:

Հրկիզված Շուշիի մասին մեծ գրողի հուշերը և առհասարակ «Ճանապարհորդություն դեպի Հայաստան» էսսեում արտահայտված մտքերը, դիրքորոշումներն ու ստերեոտիպերը պետք է գնենրացվեն: Վախը որպես բազային հույզ արտացոլվել է տողի, բառի, գրվածքի, մտքի յուրաքանչյուր անկյունում: Գուցե հենց այս՝ թուրքերի նկատմամբ արտահայտված բացասական կարծրատիպերի ֆոնին էլ ընդգծվում են հայերի նկատմամբ արտահայտված դրական կարծրատիպերը.

*Ինչքան սիրելի է ինձ դժվար ապրող,  
Հարյուրամյակը փարի հաշվող,  
Ծնող, քնող, ճչացող,  
Հոգին գամված այս ազգը:*

Իսկ «Հայաստանը» շարքը արտացոլում է, որ Մանդելշտամի համար Հայաստանը վարդ է, նույնիսկ արյան մեջ: Էթնիկական ստերեոտիպերը ժամանակի ընթացքում ենթակա են փոփոխության, իսկ եթե ստերեոտիպացումը պայմանավորող գործոնները չեն փոխվում, ապա ստերեոտիպը առավել կոշտ՝ պերսևեռատիվ երանգ է ստանում: Այսպես. «որևէ էթնոսի բնավորության գծերի մասին ավելի մեծ հավանականությամբ ճիշտ են այն ստերեոտիպերը, որոնք իրարից անկախ առաջ եկած հետերոստերեոտիպերի խմբերում նույնն են: Պարզ ասած, եթե թուրքերի մասին նույն բաներն են ասում և՛ հայերը, և՛ հույները, և՛ արաբներն ու ռուսները և այլ ազգերի ներկայացուցիչներ, ապա բավականին մեծ հավանականությամբ այդ ստերեոտիպ-պատկերացումները մոտ են ճշմարտությանը» [3, 227]: Գիտական ուսումնասիրման նյութ պետք է դառնա առանձին էթնոսների մասին նույն ստերեոտիպերի հավաքագրման թեման, որը կարող է և պետք է նպաստի էթնոսների նկատմամբ ուտնձգությունների, նվաստացումների, եղեռնագործությունների վերացմանը:

## **ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ**

1. Մանդելշտամ Օ., «Հայաստան», «Ճանապարհորդություն դեպի Հայաստան» բանաստեղծություններ:
2. Մանդելշտամ Օ., Բանաստեղծություն, արձակ, թրգմ. Հրաչյա Բեյլերյան, (Երևան: Նաիրի, 2012):
3. Նալչաջյան Ա., Էթնիկական հոգեբանություն, Եր., «Ձանգակ-97», 2001 թ., էջ 208
4. Շուշին հայոց քաղաքակրթության օրրան: Շուշիի ազատագրման 15-րդ տարեդարձին նվիրված գիտաժողովի նյութեր: -Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2007, էջ 307:
5. Мандельштам О. Э., Полное собрание сочинений и писем: В трех томах. Том второй. Проза / Осип Мандельштам. – М.: Прогресс-Плеяда, 2010., с. 22-26):
6. Мандельштам О. Э., Сочинение в 2 томах, том 1.
7. [http://tert.nla.am/archive/NLA%20AMSAGIR/Hayarvest2002/2005/2005\(3\).pdf](http://tert.nla.am/archive/NLA%20AMSAGIR/Hayarvest2002/2005/2005(3).pdf).

## Ամփոփում

### Թուրքերի նկատմամբ արտահայտված բացասական ստերեոտիպերը Օսիպ Մանդելշտամի «Կառապանը» բանաստեղծության մեջ և Նադեժդա Մանդելշտամի հուշերում

Լուսինե Ղարախանյան

Հոդվածում ներկայացված են XX դարի ռուսական և համաշխարհային դասական պոեզիայի կարկառուն ներկայացուցիչ Օսիպ Մանդելշտամի մի քանի բանաստեղծություններ, որոնք գրվել են 1920 թվականի ջարդերի հետևանքով այրված և ավերված Շուշիի տպավորության տակ: Մանդելշտամի պոեզիայում այրված Շուշին դառնում է քաղաքական թեմա: Բարբարոսների կողմից այրված Շուշին ներկայացված է գեղագիտական և հոգեբանական, զգայական և հուզական պատումով, որն ընթերցողին է փոխանցում այդ ժամանակի համապարփակ պատկերը:

Վախը, որպես հիմնական հույզ, արտացոլվում է յուրաքանչյուր բառի և տողի մեջ, նրա ստեղծագործության և մտքի մեջ:

Թուրքերի նկատմամբ բացասական կարծրատիպերի ֆոնի վրա էլ ավելի են ընդգծվում համակրանքը, կարեկցանքը և դրական վերաբերմունքը հայերի նկատմամբ:

*Հիմնաբառեր. բացասական ստերեոտիպեր, ադրբեջանցի թուրքեր, հրկիզված Շուշի, հեղինակարծրատիպեր, Օսիպ Մանդելշտամ, էթնիկական, հոգեբանական «պրիզմայի էֆեկտ»:*

## Резюме

### Отрицательный стереотип, сложившийся в отношении к туркам в стихотворении «Фаэтонщик» Осипа Мандельштама и воспоминаниях Надежды Мандельштам

Лусине Караханян

В статье представлены несколько стихотворений выдающегося представителя классической русской и мировой поэзии XX века Осипа Мандельштама, написанные под впечатлением сгоревшего и разрушенного Шуши, в результате погромов 1920-го года. Сгоревший город Шуши, в поэзии Мандельштама, становится политической темой. Сожженный варварами Шуши, представлен эстетическим и психологическим, чувственным и эмоциональным повествованием, которое передает читателю всеобъемлющую картину того времени.

Страх, как базовая эмоция, отражается в каждом слове и строке, в его сочинении и мысли.

На фоне отрицательных стереотипов по отношению к туркам еще больше подчеркивается симпатия, сострадание и положительное отношение к армянам.

**Ключевые слова:** негативные стереотипы, азербайджанские турки, сожженный Шуши, гетеростереотипы, Осип Манделштам, этнический, психологический «эффект призмы».

## Abstract

### Negative stereotypes expressed against turks in Osip Mandelstam's "The phaetonist" poem and in memories of Nadezhda Mandelstam

Lusine Kharaxanyan

The article presents a few poems created with the impressions of burnt Shushi by Osip Mandelstam - one of the classic figures of Russian and world poetry of the 20<sup>th</sup> century.

The burnt Shushi becomes a political topic in his poetry, where negative stereotype is expressed towards the Turks. Shushi burned by barbarians is presented with accurate aesthetic and psychological, emotional and sentimental interpretations, which convey the realities of the time to the reader in a comprehensive way. Fear as a basic emotion is reflected in every corner of the line, word, writing, thought. Against the background of the negative stereotypes expressed towards the Turks, the positive stereotypes expressed towards the Armenians are emphasized.

**Keywords:** negative stereotypes, Azerbaijani Turks, burnt Shushi, heterostereotypes, Osip Mandelstam, ethnic, psychological "prism effect".